**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

## ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 28.06.2022Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակարգի 23-րդ կետով՝ հանձնաժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Գլխավոր դատախազի պաշտոնում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը հանձնաժողովի 28.06.2022թ. արտահերթ նիստում քննարկել հետևյալ ընթացակարգով՝

1) մինչև տասնհինգ րոպե տևողությամբ ելույթով հանդես է գալիս գլխավոր դատախազի պաշտոնում թեկնածուին ներկայացնելու իրավասություն ունեցող անձը՝ պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը.

2) հարցեր թեկնածուին ներկայացնող անձին.

3) մինչև երեսուն րոպե տևողությամբ ելույթով հանդես է գալիս գլխավոր դատախազի պաշտոնում թեկնածուն՝ Աննա Կարենի Վարդապետյանը.

4) հարցեր թեկնածուին.

5) թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին հարցեր տալու, հարցերին պատասխանելու, ինչպես նաև հարցերին արձագանքելու համար հատկացվում է մինչև երեքական րոպե.

6) մտքերի փոխանակություն, որի ժամանակ ելույթների համար հատկացվում է մինչև հինգական րոպե.

7) մինչև տաս րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս թեկնածուն.

8) բաց քվեարկություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ